

Մարիաննա Օհանյան

Երևանի Պետական Համալսարան

091-32-01-17

mar-ohanian@yandex.ru

Եղանակավորող բայերն իբրև բժշկագիտական տեքստի ոճակագմիչ տարր

Եղանակավորման կարգը բավական հետաքրքիր դրսևորում է գտել գիտական գրականության և մասնավորապես բժշկագիտական տեքստերի մեջ: Անգլերենում եղանակավորման իմաստը հաղորդվում է եղանակավորող բայերի միջոցով, որոնք կապակցվելով ստորագյալներին կազմում են բաղադրյալ բայական եղանակավորող ստորոգյալներ: Եղանակավորող բայերը ցուց են տալիս գործողություն կատարողի հարաբերությունը գործողության նկատմամբ կամ խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ (Գաբրիելյան Վ., 2007:272): Ասվածը կարելի է հաստատել հետևյալ օրինակի (1) միջոցով.

(1) In mild cases of herpes gestations, symptomatic therapy with oral antihistamines and topical steroids *may be sufficient*.

Օրինակից պարզ երևում է, որ *may* եղանակավորող բայի գործածությունը բժշկագիտական խոսույթի սահմաններում նպատակային է: Այն կարելի է ընկալել իբրև գիտական վարկածի հավանականության ցուցիչ¹ (ենթադրվում է, որ բոլոր դեպքերը ուսումնասիրված չեն):

Ուշագրավ է հատկապես *should* եղանակավորող բայի գործածությունը, որի ոճական արժեքը բավական մեծ է բժշկագիտական տեքստերում: Ներքոհիշյալ օրինակներում (2), (3) *should* եղանակավորող բայը մատնանշում է հանգամանքներից բխող անհրաժեշտություն.

(2) In preparation for operation resuscitation with intravenous fluids *should be started* immediately.

(3) Salpingectomy *should be performed* if future fertility is undesired (e.g.ectopic pregnancy after tubal ligation), if rupture has destroyed the tube, or if there is persistent hemorrhage after attempted salphingostomy.

¹ Եզրույթը առաջին անգամ օգտագործվում է սույն հոդվածում մեր կողմից:

Վերոհիշյալ օրինակը (3) բացատրում է այն միտքը, որ եթե պտղաբերությունը /հղիությունը/ ցանկալի չէ, ապա հարկ է հեռացնել արգանդային փողը: Թեպետ քերականության տեսաբանները եղանակավորող բայի այս գործածությունը բացատրում են որպես խորհուրդ, խրատ, սակայն ավելի հաճախ վերը նշված եղանակավորող բայի գործածությունը առնչվում է անհրաժեշտության հետ, որտեղ նկատվում է նաև պարտադրանքի երանգավորում: Բժշկագիտական տեքստերում ընդգծվում է տրամաբանական Should (Logical Should) եղանակավորող բայի գործածությունը (Колужная В., 1982:64):

Որոշ դեպքերում նկատելի է *should* եղանակավորող բայի այնպիսի կիրառությանը, որտեղ օպերատիվ գործունեության համար այն ձեռք է բերում խորհրդի և ուղղորդման երանգավորում:

(4) History from the patient or accompanying family and friends *should be obtained* as quickly as possible and a general physical and pelvic examination *should be performed*.

(5) A Foley catheter *should be inserted* into the bladder and urine output maintained at 30 to 50 ml/hour.

(6) The hemoglobin-hematocrit should be repeated during the third trimester and more frequently if indicated.

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, երբ պահանջը խիստ է դրվում, *should* բայը իմաստով հավասարեցվում է *must* եղանակավորող բային, և վերը նշված օրինակներում այն արտահայտում է պարտավորություն, մի բան, որ խորհուրդ է տրվում, կամ ակնկալվում է, որ պիտի հենց այդպես արվի: Պարտավորությունն այս դեպքում ավելի բարոյական բնույթ է կրում (Кашанская 1973: 126): Մեր օրինակներում ցանկալին հասցվում է պարտադիրի աստիճանի

(7) Blood *should be drawn* for routine preoperative tests and for ABO typing and cross-matching of at least 4 U of packed cells.

(8) Both tubes *should be carefully examined*.

Վերոհիշյալ օրինակները(7), (8) ընդգծում են այն փաստը, որ *should* եղանակավորող բայի կիրառության ժամանակ գործողություններն առնչվում են քայլերի հերթականության հետ, այսինքն անհրաժեշտությունից բխող պարտադրանք է տեղի ունենում: Քայլերի հերթականությունն ազդում է նրանց համոզիչ լինելու վրա: Բժիշկը միշտ էլ դժվարանում է խոսել հիվանդության անբարենպաստ կանխատեսման կամ ինչ-որ գործողության մեջ ռիսկի մասին: Հիվանդին պետք է դրական տեղեկություն տալ, որը տրամադրում է հեռանկարում թեկուզ նվազագույն ապաքինմանը:

(9) .Patients scheduled for secondary surgery or reastonomosis *should use* contraception until the time of the second operation.

Ակնհայտ է, որ վերը նշված (9) նախադասության մեջ *should* եղանակավորող բայը ցույց է տալիս պարտավորություն,որի իմաստը հիմնականում բացատրվում է տվյալ համատեքստում:

(10) If neurologic symptoms are present, a B₁₂ level should be measured because folic acid will correct the anemia but not the neurologic symptoms.

Նմանատիպ բացատրություն կարելի է տալ հաջորդ (10) նախադասությանը, որտեղ խորհուրդն իր մեջ կրում է պարտավորության երանգավորում: Այս դեպքում հարկ է նշել, որ բոլոր մասնագիտությունների մեջ, առավել ևս բժշկի ամենօրյա պրակտիկ գործունեության մեջ մեծ նշանակություն ունի *քոմպլայենսը* /Անգլերեն-հայերեն բառարանը տալիս է **compliance** բառի հետևյալ բարձրագույնությունը - կանոնի պահպանում, զիջողականություն, համաձայնեցում, համաձայնություն (Համբարձումյան Ն.,Լազարյան Ա.,Հայրապետյան Ա.2007:119): Ահավասիկ, բժշկական առումով նույնպես նշանակում է բժշկի նշանակումները, ցուցումները կատարելու հիվանդի պատրաստականություն, ցանկություն, ներքին պարտք: Այդ նույն եզրույթը կարող է նշանակել բժշկի և հիվանդի միջև փոխըմբռնման ընդհանուր մակարդակ՝ դրական /բավարար/, անբավարար, երբեմն էլ ընդհանրապես բացասական *քոմպլայենս*:

(11) .Medications that act to paralyze bowel motility, such as diphenoxylate (in Limotol), *should usually be avoided*.

Հայտնի է, որ միշտ էլ դժվար է խոսել հիվանդության անբարենպաստ կանխատեսման կամ ինչ-որ գործողության մեջ ռիսկի մասին, այդ պատճառով *should* եղանակավորող բայի պարտավորվածության երանգավորումը հասկացվում է համատեքստից, ինչպես նախորդները (9), (10), (11):

Հաջորդ (12) նախադասության մեջ պարտավորվածությունն ընկալվում է որպես խորհուրդ կամ ցանկալիություն, իսկ խորհուրդները պետք է լինեն իրական ու որոշակի նպատակի ուղղված:

(12) Metronidazole *should not be administered* in the first 12 to 16 weeks of pregnancy. Aminoglycosides such as gentamicin *should be considered* as initial therapy until microbial antibiotic sensitivities become available.

Պետք է հիվանդին ճշգրիտ ցուցումներ տալ այն մասին, ինչ է անհրաժեշտ անել, ինչին ձգտել, ինչպես պահել: Հաշվի առնելով մանկաբարձության և գինեկոլոգիայի պրակտիկայի յուրահատկությունները՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն հատկացնել բժշկի՝ հիվանդի հետ լավագույն փոխըմբռնման հարցերին: Բավական է միայն բժշկի գրագետ խոսքը /բժշկական տեսանկյունից/, բայց բացարձակ անարդյունավետ /հիվանդի համոզմունքի տեսանկյունից/, ոչինչ չի բերի բացի վնասից: Այստեղ հարկ է նշել, որ հիվանդի հետ զրուցելու արվեստը, նրա հետ երկխոսություն վարելու ունակությունը ոչ միայն բժշկի ցանկություն, այլև որոշակի չափով շնորհ է պահանջում:

Օրինակների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ նպատակահարմարություն արտահայտելիս *should* եղանակավորող բայն ավելի հաճախ է գործածվում: Այն հաճախ ցույց է տալիս առնչություն իրական շոշափելի փաստի հետ: Մեր օրինակներում *should* եղանակավորող բայը հիմնականում հանդիպում է հաստատական կառույցներում և ընգծում է ոչ միայն նպատակահարմարության փաստը, այլև անհրաժեշտության: Արտալեզվական հիմքի առկայությունը նույնպես շեշտվում է, քանի որ ոչ նշված կերպով վարվելու դեպքում ակնկալվում է ոչ այն արդյունքը, որը կբերի հարցի լուծման: Նշված օրինակներում *should* եղանակավորող բայը թվում է թե ունի կատեգորիկ գործածություն. Նպատակահարմարությունը բարձրանում է անհրաժեշտության մակարդակի: Կարելի է նույնիսկ եզրակացնել, որ *should* եղանակավորող բայը տեքստի տվյալ տարատեսակի համար ունի ոճակագմիչ նշանակություն, որը խոսույթի մակարդակով նշույթավորված է և պայմանավորված է արտալեզվական գործոններով /հիվանդության դրական ելքը՝ ապաքինումը դառնում է այդ էական գործոններից մեկը/: Կասկած չկա, որ բժշկի և հիվանդի փոխհարաբերությունները բազմակողմանի են: Դա հոգեբանական և բարոյա-էթիկական խնդիրների մի մեծ համալիր է, որին միշտ բժիշկը հարկադրված է բախվել: Երբեմն ծագում են ոչ բժշկական բնույթի հարցեր: Բժիշկը պետք է օժտված լինի նուրբ հոգեբանական զգացողությամբ, և այստեղ անհրաժեշտ է գիտակցության մշտական աշխատանք: Հաջողությունը բուժման մեջ հնարավոր է միայն մարդկային վստահելի հարաբերությունների և գիտական ձեռքբերումների համակցությամբ: Իսկ դրա համար տեխնիկապես հագեցած բժիշկը պետք է ոչ միայն բուժի, այլև կարողանա խոսել իր հիվանդի հետ:

Գրականություն

1. Գաբրիելյան Վ.Գ., Ժամանակակից անգլերենի գործնական քերականություն. Ստեփանակերտ, “Դիզակ Պլյուս”, 2007.
2. Gordon E.M., Krylova I.P., A Grammar of the Present Day English, Москва, “Высшая школа”, 1986.
3. Каушанская В.А., Ковнер Р.А., Кожевникова О.Н., и др., A Grammar of the English Language. Ленинград, “Просвещение” 1973.
4. Колюжная В. В., Стиль англоязычных документов международных организаций, Киев, Наукова Думка, 1982.
5. Համբարձումյան Ն., Լազարյան Ա., Հայրապետյան Ա., English-Armenian Dictionary. Երևան, Մակմիլան Արմենիա. 2007.
6. Keneth R. Niswander., Arthur T. Evans. Manual of Obstetrics. Fifth Edition, Boston, New York, Toronto, London. 1991.